**Հավելված 6**
ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/9 **ծածկագրով**
**Գնանշման հարցման հրավերի**

# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԾԱՌԵՐԻ ԷՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N** ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/9

ք. Ալավերդի «__11__» __11____ 2021թ.

«_Ալավերդու համայնքապետարանը_», ի դեմս համայնքապետ Ս.Խեչումյան-ի, որը գործում է համայնքապետարանի- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ---<<Արթուր Ավետիսյան Սամվելի>> ԱՁ-ն, ի դեմս տնօրեն –Ա.Ավետիսյանի-ի, որը գործում է --ընկերության-- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է << Ալավերդի համայնքի կարիքների համար վտանգ ներկայացնող ծառերի էտման ծառայությունների>> մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման

դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5577000 (հինգ միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

---

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույնպայմանագրովևսույնպայմանագրիհիմանվրակնքված համաձայնագրերովպարտավորություններնամբողջությամբկամմասնակիորենչկատարելուհամարկողմերնազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, ևորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունըշարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնիրավունքունիլուծելպայմանագիրը՝այդմասիննախապեստեղյակպահելովմյուսկողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

---

[19]Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույնկետըհանվումէնախագծից:

[20]Տարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

[21]Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որիշրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորություններիչկատարմանկամոչպատշաճկատարմանհանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7.2 Պայմանագրիցծագածկողմիպայմանագրայինպարտավորությունըչիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝հակընդդեմպարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1)Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

7.8 Ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝Կատարողիառաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որՊատվիրատուիմոտչիվերացելծառայությանօգտագործմանպահանջը, իսկԿատարողիառաջարկությունըներկայացվելէոչուշ, քանպայմանագրովիսկզբանեծառայություններիմատուցմանհամարսահմանվածժամկետըլրանալուցառնվազն 5 օրացուցայինօրառաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[23]Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[24]Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.13 Սույնպայմանագիրըկազմվածէ__6__ էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունեննհավասարազորիրավաբանականուժ: Սույնպայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածներըհանդիսանումենպայմանագրիանբաժանելիմասը, յուրաքանչյուրկողմինտրվումէ պայմանագրիմեկօրինակ:

7.14 ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանիրավունքը:

**8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզ ք. Ալավերդի | <<Արթուր Ավետիսյան Սամվելի>> ԱՁ |
| Զորավար Անդրանիկի 8/1 | Հասցե. Արարատ, գոռավան, Վ. Սարգսյան, տ. 36 |
| Ալավերդու համայնքապետարան | Բանկ ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ |
| ՀՀ Ֆինանսների նախարարության | Հ/Հ 220399803307000 |
| Գործառնական վարչություն | ՀՎՀՀ 47908681 |
| հ/հ900262121107 | Ա. Ավետիսյան |
| ՀՎՀՀ 06954208 | |
| Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան | |
| ------------------------------ | ------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | |

Հավելված N 1
« 11 » 11 2021թ. կնքված
«-ԼՄԱՀ--ԳՀԾՁԲ--21-/--9-» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումներ ի պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավոր գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | Ծառայության մատուցման հասցեն | Ծառայության մատուցման ժամկետը |
| 1 | 77341100 | Ծառերի էտման ծառայություն | 1. Ալավերդի քաղաքի տարածքում գտնվող, քաղաքացիների ազատ տեղաշարժին խոչընդոտող, ինչպես նաև վերջիններիս կյանքին ու առողջությանը սպառնացող ու վտանգ ներկայացնող ծերացած/չորացած/ ծառերի խոր էտում(ծառաբնի հիմքից հաշվածէ4-4,5 մ բարձրությունից՝ կտրում)/հատում/.<br>• 30սմ և ավելի տրամագծով – 211 ծառ:<br>2.Հատված ծառերի, ինչպես նաև վերջիններիս կմախքային և սաղարթային ճյուղերի խոր էտման /կամ կտրման /արդյունում գոյացած փայտանյութի ու թեփի (թեփն անհրաժեշտ է պարկավորել) տեղափոխումը և պահեստավորումը իրականացնել պատվիրատուի կողմից նշված վայրում(առավելագույն հեռավորությունը՝ մինչև 5 կմ):Խոր էտման/կամ հատման/ արդյունքում ստացված փայտանյութը կտրտել 1 | դրամ | 5577000 | 5577000 | 1 | Ալավերդի քաղաքում՝ ըստ պատվիրատուի կողմից նշված հասցեների | Ձեռքբերման նախընտրելի ժամկետ սահմանել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.11.2021թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մետրանոց կտորներով(< մետրովկա>):<br>3. <Կատարող> կողմ կազմակերպության մեքենա- սարքավորումները և անհրաժեշտ այլ մեխանիզմները պետք է լինեն սարքին վիճակում, ապահովեն անխափան և անվտանգ աշխատանքային գործընթաց:<br>4. Աշխատանքներն իրականացնելիս, պահանջվում է՝ պահպանել և ապահովել աշխատանքային անվտանգության կանոններն ու անհրաժեշտ այլ պայմանները: | | | | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ Լոռու մարզ ք. Ալավերդի**
**Զորավար Անդրանիկի 8/1**
**Ալավերդու համայնքապետարան**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**Գործառնական վարչություն**
h/h900262121107
**ՀՎՀՀ 06954208**
**Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան**

-----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**<<Արթուր Ավետիսյան Սամվելի>> ԱՁ**
**Հասցե. Արարատ, գոռավան, Վ. Սարգսյան, տ. 36**
**Բանկ ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ**
**Հ/Հ 220399803307000**
**ՀՎՀՀ 47908681**
**Ա. Ավետիսյան**

-----------------------------------------
(ստորագրություն)

*Հավելված N 2*
*«09» նոյեմբեր 2021 թ. կնքված*
**«ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-21-/-9»** *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| **Աշխատանքի** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | |
| | | | **նոյեմբեր** | **դեկտեմբեր** | Ընդամենը |
| 1 | 77341100 | **Ալավերդի համայնքի կարիքների համար վտանգ ներկայացնող ծառերի էտման ծառայության ձեռք բերում** | 5 577000 | 5577000 | 5577000 |

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
| **ՀՀ Լոռու մարզ ք. Ալավերդի** | **<<Արթուր Ավետիսյան Սամվելի>> ԱՁ** |
| **Զորավար Անդրանիկի 8/1** | **Հասցե. Արարատ, գռավան, Վ. Սարգսյան, տ. 36** |
| **Ալավերդու համայնքապետարան** | **Բանկ ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության** | **Հ/Հ 220399803307000** |
| **Գործառնական վարչություն** | **ՀՎՀՀ 47908681** |
| h/h900262000707 | **Ա. Ավետիսյան** |
| **ՀՎՀՀ 06954208** | |
| **Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան** | |
| ---------------------------------------- | ---------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | |